ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագիր
Ազգային ղեկավար կոմիտեի տեխնիկական առաջադրանք

Գործառույթներ և պարտավորություններ

1. ՓԴԾ Ազգային ղեկավար կոմիտեն (ԱՂԿ) հանդիսանում է ՓԴԾ-ի կարևոր որոշում կայացնող մարմին ազգային մակարդակում, և տրամադրում է Ազգային ծրագրի ընդհանուր վերահսկողություն, կառավարում և ուղղորդում: ԱՂԿ կազմը և գործունեությունը համապատասխանում են ԳԷՀ ՓԴԾ Գործառնական ուղեցույցի համապատասխան բաժիններին: ՓԴԾ գործառնական ուղեցույցները կցվում են Տեխնիկական առաջադրանքին (ՏԱ) և հասանելի են այստեղ:

2. ԱՂԿ անդամի հիմնական դերը ներառում է հետևյալը.

ա) Տրամադրել Ազգային ծրագրի ընդհանուր կառավարում և ռազմավարական ուղղորդում՝ ներառյալ ՓԴԾ Ազգային ծրագրի ռազմավարության (ԱԾՌ) մշակումը, իրականացումը և պարբերաբար վերանայումը:

բ) Վերանայել և հաստատել ծրագրեր ԱԾՌ-ին համահունչ՝ հետևելով մասնակցային, ժողովրդավարական, անկողմնակալ և թափանցիկ ընթացակարգերին՝ համաձայն ՓԴԾ գործառնական ուղեցույցների և գործառնական ստանդարտ ընթացակարգերի:

գ) Տրամադրել տեխնիկական աջակցություն ծրագրի վերահսկմանը և իրականացմանը ազգային մակարդակով՝ համաձայն տվյալ գործառնական փուլի ՓԴԾ Ծրագրային փաստաթղթի, ներառյալ՝ ծրագրի մոնիտորինգը և գնահատումը (օրինակ՝ դաշտային այցելություններ):

դ) ՓԴԾ գործողությունները կապել ԳԷՀ-ի և երրորդ կողմերի համաֆինանսավորմամբ գլոբալ, տարածաշրջանային և ազգային քաղաքականությունների և ռազմավարությունների հետ:

ե) Աջակցել ՓԴԾ-ի համար գործընկերության զարգացման և ռեսուրսների մոբիլիզացման ջանքերին ծրագրի և ազգային մակարդակներում:

զ) Աջակցել ՓԳԾ-ի քաղած դասերի և հաջողությունների ընդլայնմանն ու տարածմանը ազգային զարգացման պլանավորման և քաղաքականության մշակման գործընթացներում:

Ընտրություն և անդամակցում

3. Նոր ազգային ծրագրերի համար ԱՂԿ անդամների ընտրությունը ղեկավարում է ՄԱԶԾ-ի Երկրի գրասենյակը Ազգային համակարգողի (ԱՀ) աջակցությամբ՝ ՓԴԾ Կենտրոնական ծրագրի կառավարման թիմի (ԿԾԿԹ) և շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ խորհրդակցությամբ: Նորաստեղծ ԱՂԿ-ի կազմը և նշանակումը ենթակա է վերանայման ԿԾԿԹ Տարածաշրջանային պատասխանատուի (ՏՊ) կողմից և վերջնական հաստատման ՓԴԾ գլոբալ մենեջերի կողմից: Գլոբալ մենեջերի կողմից հաստատման հիման վրա ՄԱԶԾ Մշտական ներկայացուցիչը ՓԴԾ-ի անունից տրամադրում է նշանակման գրություններ:

Խոշորացված ծրագրերի դեպքում հաստատումը տրամադրվում այդ ծրագրերի Գլոբալ համակարգողի կողմից:

4. Գործող ԱՂԿ-ի դեպքում, ԱՂԿ-ի նոր անդամների ընտրությունը և ռոտացիան իրականացվում է ՄԱԶԾ-ի Երկրի գրասենյակի կողմից գործող ԱՂԿ-ի և ԱՀ-ի աջակցությամբ՝ խորհրդակցելով շահագրգիռ կողմերի լայն շրջանակի և ներկայացուցչական խմբի հետ ազգային մակարդակում: Գործող ԱՂԿ-ի համար նշանակումները և թարմացումները հաստավում են ԿԾԿԹ-ի Տարածաշրջանային պատասխանատուի (ՏՊ) կողմից: Հիմք ընդունելով ՏՊ-ի հաստատումը, ՄԱԶԾ ՄՆ-ը տրամադրում է նշանակման գրություններ ՓԴԾ-ի անունից: Խոշորացված ծրագրերի դեպքում հաստատումը տրամադրվում այդ ծրագրերի Գլոբալ համակարգողի կողմից:
5. Թե՛ նոր, և թե՛ գործող ԱՂԿ-ի համար, ԱՂԿ-ի ոչ-կառավարական անդամների առաջադրումը և ընտրությունը պետք է իրականացվի թափանցիկ կերպով՝ ազգային շահագրգիռ կողմերի հետ հնարավորինս լայն խորհրդատվության միջոցով: Եթե ԿԾԿԹ-ի կողմից բացառություն չի տրամադրվել՝ ելնելով երկրի համատեքստից, տարածվում է ԱՂԿ անդամի առաջադրման բաց հայտարարություն (օրինակ՝ էլ. փոստով տարածում ՔՀԿ ցանցերի և գործընկերների միջև, հաղորդագրություն տպագիր մամուլով, ռադիոյով և այլ համապատասխան միջոցներով) ընտրության հստակ չափանիշներով և ընտրության պատշաճ գործընթացով:
6. Գործող ԱՂԿ-ն վերանայում է առաջադրումները և ՄԱԶԾ ՄՆ-ին է տրամադրում առաջարկվող կազմ՝ հաշվի առնելով ինչպես անհատ թեկնածուների փորձը և որակավորումը, այնպես էլ հանձնաժողովի ընդհանուր կազմն ու հաշվեկշիռը: ՄԱԶԾ ՄՆ-ը, խորհրդակցելով ԱՀ-ի հետ, վերանայում և կհամաձայնեցնում է ԱՂԿ նոր անդամների առաջարկվող ցուցակը, որն այնուհետև ներկայացվում է ԿԾԿԹ կամ Խոշորացված ծրագրերի Գլոբալ համակարգողին՝ վերջնական հաստատման և ՓԴԾ-ի տվյալների բազայում ընդգրկելու համար: ՓԴԾ տվյալների բազան պետք է պարբերաբար թարմացվի՝ ներառյալ ժամկետները և կոնտակտային տվյալները:
7. ԱՂԿ ոչ-կառավարական անդամները պետք է ունենան երկրում աշխատող ՔՀԿ-ների, համայնքային կազմակերպությունների և բնիկ ժողովուրդների հետ աշխատելու բարձր վստահելիություն և մեծ փորձ, և այդպիսով ներկայացնեն նրանց կարիքներն ու շահերը հանձնաժողովի քննարկումներում: Քաղաքացիական հասարակության ուժեղ, փորձառու և տեխնիկապես որակյալ ներկայացուցչությունը ԱՂԿ-ում կարևոր է՝ որպես ՔՀԿ-ների, համայնքային կազմակերպությունների և բնիկ ժողովուրդների հետ աշխատելու իր մանդատին ՓԴԾ-ին պատասխանատու պահելու միջոց: Այս անդամները պետք է ունենան նաև անհրաժեշտ գիտելիքներ ԳԷՀ-ի կիզակետային ոլորտներում և/կամ հատուկ թեմաներում, ինչպիսիք են գենդերային հարցերը, կայուն կենսամիջոցները, մոնիտորինգը և գնահատումը և գիտելիքների կառավարումը:

Անդամակցության ծամկետը

8. ԱՂԿ անդամակցության տևողությունը կազմում է երեք տարի, որից հետո հնարավոր է նաև մեկանգամյա երկարաձգում: ԱՂԿ անդամի անդամակցության ժամկետը պետք է լինի անընդմեջ երկու ժամկետից ոչ ավել, եթե բացառիկ հիմունքներով հաստատված չէ ՓԴԾ Գլոբալ մենեջերի կամ Խոշորացված ծրագրի Գլոբալ համակարգողի կողմից:

9. Խորհուրդ է տրվում ապահովել առնվազն մեկ ժամկետային ընդմիջում (3 տարի) մինչև անհատը կարող է վերադառնալ որպես ԱՂԿ անդամ, նույնիսկ նոր կարգավիճակով: Նոր անդամներ հրավիրելը առողջ քաղաքականություն է, որը նոր գաղափարներ և փորձ է բերում ծրագրի իրականացմանը:

10. Անդամների ռոտացիան պետք է պլանավորվի կանոնավոր կերպով, և ԱՂԿ-ի մոտավորապես մեկ քառորդը (2-3 անդամ) կարող է փոխվել ցանկացած տարում՝ անդամների միանգամից կտրուկ փոփոխությունից խուսափելու համար:

11. ԱՂԿ-ին մասնակցելը կամավոր է, առանց դրամական փոխհատուցման: Ծրագրի տարածքների այցելությունների կամ ԱՂԿ նիստերի համար ճանապարհորդության ծախսերը կարող են ծածկվել ՓԴԾ-ի գործառնական բյուջեով (ԳԲ)՝ ըստ անհրաժեշտության, և դրանք պետք է արտացոլվեն որպես տարեկան աշխատանքային ծրագրի և ԳԲ պլանավորման գործողություն:

12. ԱՀ-ը, ԱՂԿ այլ անդամների, ներառյալ ՄԱԶԾ ՄՆ-ի հետ պատշաճ խորհրդակցելուց հետո, կարող է առաջարկել ԱՂԿ անդամի փոփոխություններ, եթե պարզվի, որ որոշակի անդամի մասնակցությունը չի նպաստում ծրագրին: ԱՂԿ այն անդամը, որը չի մասնակցում երեք անընդմեջ հանդիպումների առանց հիմնավոր պատճառաբանության, չի կարող դիտարկվել ռոտացիայի կամ երկարաձգման համար: Վերջնական որոշումը հաստատվում է ՓԴԾ Գլոբալ մենեջերի կամ Խոշորացված ծրագրի Գլոբալ համակարգողի կողմից, իսկ հեռացող անդամին ուղարկվող գրությունը պետք է ստորագրվի ՄԱԶԾ ՄՆ-ի կողմից:

13. ՄԱԿ-ի էթիկայի վարքագծի կանոններին համապատասխան, ԱՂԿ-ի բոլոր անդամները պետք է հայտարարեն շահերի բախում, իրական կամ հնարավոր՝ կապված քննարկմանը ներկայացված հայեցակարգերի կամ առաջարկների հետ: ԱՂԿ բոլոր անդամները պետք է ստորագրեն շահերի բախման հայտարարություն ինչպես նշանակման պահին, այնպես էլ նախագծեր վերանայող և հաստատող ԱՂԿ յուրաքանչյուր նիստին: Շահերի բախումը կարող է ներառել մի շարք հանգամանքներ, ներառյալ. ա) առաջարկի հետ հարազատների կամ ընտանիքի անդամների կապի առկայություն, բ) ֆինանսական կամ անձնական հետաքրքրություն հայտատու կազմակերպության նկատմամբ, գ) քաղաքական, հեղինակության հետ կապված և/կամ էթիկական այլ նկատառումներ: Լրացուցիչ մանրամասների համար դիմեք NSC no-Conflict of Interest Statement:

ԱՂԿ-ի կազմը

14. Գլոբալ փորձից ելնելով՝ առաջարկվում է, որպեսզի ԱՂԿ-ն կազմված լինի 7-12 անդամից: Այնուամենայնիվ, դրանից շեղումը նույպես ընդունելի է, քանի որ անդամակցությունը կարող է տարբեր լինել՝ կախված երկրի համատեքստից: Անդամակցությունը պետք է լինի այնքան մեծ, որ ներառի քաղաքացիական հասարակության անդամների մեծամասնությունը, ինչպես նաև կառավարության և ՄԱԶԾ Երկրի գրասենյակի անդամների:
15. ԱՂԿ անդամների մեծ մասը պետք է լինեն ոչ-կառավարական հատվածից: ԱՂԿ-ն կազմված է ՔՀԿ ոլորտի կամավոր անդամներից (ներառյալ ՀԿ-ներ, ակադեմիա և գիտական հաստատություններ, բնիկ ժողովուրդներ, կանանց խմբեր և այլն), ՄԱԶԾ-ի գրասենյակ (ՄՆ և/կամ երկրի գրասենյակից ՓԴԾ-ում նշանակված պատասխանատու), և ԳԷՀ-ի Ազգային գործառնական պատասխանատու (կամ նրա պատվիրակը) և այլ անձինք, ներառյալ մասնավոր հատվածը, դոնոր հաստատությունները, փորձագետները և, ըստ անհրաժեշտության, սահմանափակ թվով կառավարության լրացուցիչ անդամներ:
16. ՄԱԶԾ ՄՆ-ը և ԳԷՀ Ազգային գործանական պատասխանատուն համարվում են ինստիտուցիոնալ անդամներ: ԱՂԿ մյուս բոլոր անդամները հրավիրվում են միանալ իրենց անձնական կարողությամբ: ԱՂԿ-ի անդամակցությունը հնարավորինս առավելագույն չափով պետք է արտացոլի փորձ ԳԷՀ-ի կիզակետային ոլորտներում՝ կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության մեղմման, միջազգային ջրերի, հողերի կայուն կառավարման, անտառների կայուն կառավարման, քիմիական նյութերի և թափոնների և այլ թեմատիկ ոլորտներում, որոնց վրա կենտրոնացած է ազգային ծրագիրը:
17. ԱՂԿ անդամներից մեկը պետք է նշանակվի որպես պատասխանատու՝ գենդերային հարցերի վերաբերյալ փորձաքննություն տրամադրելու համար: Առաջարկվում է նաև ԱՂԿ-ում նշանակել երիտասարդության և բնիկ ժողովուրդների հարցերով պատասխանատու:
18. Ընդհանուր առմամբ, պահանջվում է միայն կառավարության մեկ ներկայացուցիչ (ԳԷՀ-ի Ազգային գործառնական պատասխանատու կամ քաղաքական պատասխանատու) որպես

ինստիտուցիոնալ անդամ: Կախված հանգամանքներից, կարող են քննարկվել կառավարության լրացուցիչ ներկայացուցիչներ, ինչպիսիք են ֆինանսների նախարարությունը, կոնվենցիայի պատասխանատու(ները) և/կամ այլ համապատասխան անդամներ: Կառավարության անդամները պետք է զբաղեցնեն ՓԴԾ-ի աշխատանքին համապատասխան պաշտոններ և այնպիսի մակարդակում, որպեսզի նրանք կարողանան նպաստել ռազմավարական և տեխնիկական քննարկումներին, մասնավորապես՝ առաջարկները գնահատելիս և հաստատելիս:

Հանդիպումներ և կարգի կանոններ

19. ԱՂԿ-ները որոշումներ են ընդունում համաձայնության (կոնսենսուսի) սկզբունքով և հազվադեպ են դիմում քվեարկության՝ որոշելու արդյոք նախագիծը հաստատված է, թե որևէ գործողություն պետք է իրականացվի: ԱՂԿ անդամները, ընդհանուր առմամբ, պետք է կարողանան և ցանկանան կառուցողական քննարկել և մշակել կոնսենսուսային որոշումներ: Համաձայնեցված որոշումներ կայացնելու համար առաջարկվում է ապահովել ԱՂԿ անդամների մեծամասնության մասնակցությունը, ներառյալ՝ ոչ-կառավարական և կառավարության անդամների հավասարակշռված ներկայացվածությունը:
20. Հանդիպումները դյուրին դարձնելու համար ԱՂԿ-ն կարող է որոշում կայացնել ընտրել իր նախագահին (նախագահներին)՝ ունենալով. ա) որոշակի ժամանակահատվածում կոմիտեի ամենահավատարիմ անդամներից մեկին, սակայն խստորեն առաջարկվում է ոչ ավելի, քան մեկ ժամկետով կամ 3 անընդմեջ տարիների ընթացքում, կամ բ) կոմիտեի անդամները հերթափոխով՝ յուրաքանչյուր անդամի մասնակցությունն ուժեղացնելու համար: Այն դեպքում, երբ նախագահողը ընտրվում է կառավարությունից, խիստ առաջարկվում է ապահովել կառավարության և ոչ-կառավարական ներկայացուցչության միջև համանախագահի մոտեցում ծրագրի և ինստիտուցիոնալ նպատակների խթանման համար:
21. ԱՂԿ-ն նիստ է գումարում առնվազն երկու անգամ տարվա ընթացքում (կամ ԱՂԿ-ի որոշմամբ)՝ ՓԴԾ-ին ռազմավարական ուղղորդում տրամադրելու, դրամաշնորհային առաջարկները դիտարկելու և հաստատելու, նաև իր լիազորությունների շրջանակներում այլ գործողություններ իրականացնելու համար:
22. ԱՂԿ-ի հերթական նիստերը սովորաբար կարող են ներառել օրակարգի հետևյալ կետերը.
    ա) ՓԴԾ Ազգային ծրագրի և ՓԴԾ գլոբալ կարգավիճակի և առաջընթացի մասին զեկուցում,
    բ) Իրավիճակի վերաբերյալ հաշվետվություններ և թարմացումներ իրականացվող ծրագրերի և գործունեության վերաբերյալ,
    գ) Դրամաշնորհների տրամադրման կատարողականի ֆինանսական հաշվետվություն,
    դ) Քննարկմանը ներկայացված առաջարկների ներկայացում:
23. Ծրագրերը հաստատող նիստերի ԱՂԿ-ի արձանագրությունները պետք է հնարավորինս մանրամասն և հստակ լինեն՝ ելնելով ՓԴԾ ԱՂԿ-ի ստանդարտ ձևանմուշից՝ թվարկելով յուրաքանչյուր դիտարկված նախագիծ, ներառյալ ԱՂԿ բոլոր առաջարկությունները կամ դիտարկումները յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ: Յուրաքանչյուր նախագծի վերաբերյալ ԱՂԿ որոշումը պետք է հստակ նշվի, ներառյալ ցանկացած վերջնական հաստատում պահանջվող վերանայակերպումները: Հաստատված նախագծերի ցանկը պետք է ներառի հաստատված բյուջեի չափը: Արձանագրությունը պետք է ստորագրվի ներկա գտնվող ԱՂԿ անդամների կողմից:
24. ԱՂԿ-ն պետք է վերանայի և ստորագրի այն նախագծային առաջարկները, որոնք վերանայակերպվում կամ ճշգրտվում են ԱՂԿ-ի կողմից պայմանական հաստատվելուց հետո, նախքան դրանք ՄԱԶԾ-ի ՄՆ-ի ներկայացնելը՝ Համաձայնության Հուշագիր ստորագրելու համար: Պաշտոնական հանդիպում չի պահանջվում, և վերանայումը կարող է իրականացվել առարկության բացակայության հիմքով:
25. Ոչ մի ՓԴԾ ծրագիր չի կարող իրականացվել ազգային մակարդակով առանց ԱՂԿ-ի հաստատման, բացի պլանավորման դրամաշնորհից, որի հասատատման համար ԱՂԿ-ն կարող էր լիազորել ԱՀ-ին՝ ըստ անհրաժեշտության (մանրամասների համար տե՛ս ՓԴԾ-ի գործառնական ուղեցույցը): Գործառնականորեն, ԱՂԿ որոշումները վերջնական են

համարվում, պայմանով, որ դրանք համահունչ են ՓԴԾ գործառնական ուղեցույցներին, ԳԷՀ գործառական փուլի ՓԴԾ ծրագրի փաստաթղթին և Ազգային ծրագրի ռազմավարությանը (կամ Խոշորացված ծրագրի փաստաթղթին):

26. Որպես այդպիսին, ԱՂԿ-ն պետք է անի հնարավորինը, որպեսզի ապահովվի ՓԴԾ դրամաշնորհների տեխնիկական և բովանդակային որակը և ՔՀԿ դրամաշնորհ ստացողների վարչական և ֆինանսական կարողությունները, փաստացի կամ հնարավոր: ՄԱԶԾ ՄՆ-ին, կամ նրա պատվիրակին, ինչպես նաև ԱՂԿ-ի այլ անդամներին, խրախուսվում է տրամադրել ցանկացած համապատասխան տեղեկատվություն այդ մտահոգությունների, հատկապես ՔՀԿ-ների ֆինանսական և կազմակերպչական ամբողջականության վերաբերյալ: Այնուամենայնիվ, ոչ ԱՂԿ-ն, ոչ էլ նրա առանձին անդամները՝ որպես ծրագրի կամավորներ, չեն կրում որևէ իրավական պատասխանատվություն ՓԴԾ-ի կամ իր գործունեության համար:
27. ԱՂԿ-ի օբյեկտիվությունը, թափանցիկությունը և արժանահավատությունը գերակա նշանակություն ունեն ՓԴԾ-ի ազգային ծրագրի հաջողության և շահագրգիռ կողմերի միջև լավ հարաբերությունների պահպանման համար: Որպես ընդհանուր կանոն, ազգային ծրագրերը չեն կարող դիտարկել առաջարկություններ, որոնք կապված են ԱՂԿ-ի գործող անդամ կազմակերպությունների հետ: ՔՀԿ-ն, այնուամենայնիվ, կարող է առաջարկություններ ներկայացնել, երբ ԱՂԿ-ի հետ կապված անդամը ավարտի ծառայության ժամկետը և այլևս Կոմիտեի անդամ չի լինի:

Ազգային համակարգողի պարտականություններ

28. ԱՀ-ը ծառայում է ԱՂԿ-ում ի պաշտոնե, մասնակցելով խորհրդակցություններին, բայց ոչ նախագծի ընտրության վերաբերյալ որոշումների կայացմանը:
29. ԱՀ- ը սովորաբար գումարում է ԱՂԿ-ն և գործում է որպես նրա քարտուղարություն, այդ թվում՝

ա) Կառավարում է ԱՂԿ անդամների միջև կապը, նիստերի մասին ծանուցագրեր ուղարկում,
բ) Պատասխանում է ԱՂԿ-ի անդամների տեխնիկական հարցերին՝ ՓԴԾ-ի որպես գլոբալ ծրագրի գործառույթներին վերաբերող մի շարք թեմաների վերաբերյալ,
գ) Պարզաբանում է տրամադրում ստացված հայեցակարգերի և ծրագրերի, այդ թվում՝ պլանավորման դրամաշնորհների վերաբերյալ,
դ) Տեղեկատվություն է տրամադրում իրականացման փուլում գտնվող հաստատված ՓԴԾ նախագծերի վերաբերյալ,
ե) Ներկայացնում է բովանդակային հաշվետվություններ ՓԴԾ-ի կարգավիճակի և առաջընթացի և գործունեության վերաբերյալ,
զ) Պատրաստում է ԱՂԿ-ի հիմնական որոշումների և քննարկումների ամփոփագրեր, որոնք պետք է փոխանցվեն UNOPS-ին և վերբեռնվեն ՓԴԾ-ի տվյալների բազայում: ՓԴԾ-ի ստանդարտ ձևանմուշում ներկայացված ԱՂԿ-ի ամփոփիչ որոշման պատճենը, ներառյալ հավանության արժանացած հայեցակարգերի և որոշումների ցանկը, պետք է վերանայվի և ստորագրվի բոլոր ներկա անդամների կողմից: